«UNIMOBILE» ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

1. Հաճախորդի կողմից ստացված հանձնարարականների հիման վրա կատարել համապատասխան գործարքներ Հաճախորդի հաշիվներով՝ Բանկի գործառնական օրվա ռեժիմին համապատասխան.
2. Ապահովել «UNIMobile» բջջային հավելվածի (այսուհետ՝ Հավելված) անխափան աշխատանքը.
3. Մոբայլ բանկինգ ծառայությունը Հավելվածի միջոցով ծառայություններ մատուցելիս Հաճախորդին ապահովել հետևյալ հնարավորություններով՝ շուրջօրյա մուտքի հնարավորություն, տարածքային սահմանափակումների բացակայություն, բանկային գործարքների իրականացման օգտագործման պարզություն.
4. Պահպանել Բանկի կողմից սահմանված և Բանկի՝ **www.unibank.am** պաշտոնական կայքում տեղադրված Հավելվածի «Գաղտնիության և անվտանգության կանոնները».
5. Հաճախորդի պահանջով և վերջինիս նույնականացման հիման վրա կասեցնել կամ արգելափակել Հաճախորդի մուտքանունը և գաղտնաբառը.
6. Հաճախորդի պահանջով և վերջինիս նույնականացման հիման վրա կատարել փոփոխություններ Հաճախորդի տվյալներում.
7. Կատարել ՀՀ օրենսդրությունից, ներառյալ ենթաօրենսդրական իրավական ակտերից բխող իր պարտականությունները.
8. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից Հավելվածի օգտագործման անվտանգության և գաղտնիության պահանջների խախտման արդյունքում իր նույնականացման տվյալներն այլ անձանց կողմից օգտագործվելու հետևանքով առաջացած վնասների համար:
9. Բանկը պատասխանատվություն չի կրում այն հարաբերությունների և դրանց հետևանքով ծագած պարտավորությունների համար, որոնք կարող են առաջանալ Հաճախորդի և երրորդ անձանց միջև՝ կապված Հաճախորդի կողմից երրորդ անձանց կատարված փոխանցումների հետ, բացառությամբ, եթե դրանք ուղղակիորեն կապված չեն Հավելվածի միջոցով ծառայությունների մատուցման հետ:
10. Բանկը պատասխանատվություն չի կրում ինտերնետ կապի խափանման դեպքում կասեցված, չեղարկված գործարքների, Հաճախորդի կողմից սխալ մուտքագրված հանձնարարականների, Հաճախորդի պատճառով գաղտնաբառի և նույնականացման այլ տվյալների հրապարակման հետևանքով Հաճախորդին պատճառված վնասների համար:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

1. Հետևել Հավելվածից օգտվելու կանոններին և պայմաններին.
2. Խստորեն պահպանել Բանկի կողմից սահմանված և Բանկի՝ www.unibank.am պաշտոնական կայքում տեղադրված Հավելվածի գաղտնիության և անվտանգության կանոնները».
3. Բանկին տրամադրել բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե, ինչպես նաև Բանկի հետ հեռահար (առանց Բանկ այցելելու) հաղորդակցության ցանկության դեպքում՝ հատուկ բարդ գաղտնաբառ իրեն նույնականացնելու համար և Բանկին անհապաղ տեղեկացնել վերոնշյալ տվյալների փոփոխության մասին (գաղտնաբառի բարդության աստիճանը որոշում է Հաճախորդն՝ իր ռիսկով, սակայն գաղտնաբառը պետք է պարունակի առնվազն 8 նիշ, որոնցից առնվազն մեկ մեծատառ, մեկ փոքրատառ և մեկ թիվ).
4. Հավելվածով աշխատող սարքավորման կորստի կամ կողոպուտի դեպքում այդ մասին անհապաղ հայտնել Բանկին.
5. Հավելվածից օգտվելու դեպքում բջջային ծրագրի խափանումների առաջացման դեպքում այդ մասին հայտնել Բանկին.
6. Հաճախորդը պարտավոր է Բանկին հայտնել իր նույնականացման տվյալների, այդ թվում անձը հաստատող փաստաթղթի, հասցեի, հեռախոսահամարի փոփոխության մասին.
7. Հաճախորդը պարտավոր է Հավելվածից օգտվելու համար սակագներ սահմանված լինելու դեպքում ժամանակին վճարել սահմանված սակագները.
8. Հաճախորդը կրում է Բանկին տրամադրված բջջային հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի և նույնականացման այլ տվյալների ճշտության և դրանք փոխվելու դեպքում այդ մասին Բանկին չտեղեկացնելու պատասխանատվությունը: